ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1215 - Ա

«ԹՈՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում գտնվող, 1.016.759.431,0 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, 14622,63 քառ. մետր մակերես ունեցող շենք-շինությունները, ինչպես նաև այդ շենք-շինությունների զբաղեցրած՝ սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ 292.234.461,0 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 6,51007 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը՝ 03092020-07-0038, գրանցված՝ 03.09.2020 թ.) և 36.140.977,0 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը՝ 1779717, գրանցված՝ 31.03.2004 թ.) ազգային ռեֆերենս լաբորատորիայի մասնաշենքը ներդնել «Թոքաբանության

ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը:

2. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող համակարգչային շերտագիր տոմոգրաֆիայի սարքավորումը՝ 170.000.000,0 ՀՀ դրամ արժեքով, ներդնել ընկերության կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը:

3. ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծրագրերի հզորացում» դրամաշնորհային ծրագրով հատկացված դրամաշնորհի միջոցներով՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում գտնվող շենք-շինությունների վրա կատարված կապիտալ բնույթի աշխատանքները՝ 2024 թվականի փետրվարի 27-ի դրությամբ 97.060.250,0 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, այդ շենք-շինությունների զբաղեցրած՝ սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասի տարածքում կառուցված թթվածնային կայանի շինությունը՝ 2024 թվականի փետրվարի 27-ի դրությամբ 18.562.300,0 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, նույն հողամասի վրա տեղադրված արևային կայանը՝ 2024 թվականի փետրվարի 27-ի դրությամբ 163.304.523,0 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, և Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող ազգային ռեֆերենս լաբորատորիայի մասնաշենքի վրա կատարված կապիտալ բնույթի աշխատանքները՝ 2024 թվականի փետրվարի 27-ի դրությամբ 245.365.273,0 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, ներդնել ընկերության կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքը ընկերության կանոնադրական կապիտալում ներդրման արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 2.039.427.215 հատ հասարակ (սովորական)՝ յուրաքանչյուրը 1 ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելանում է 2.039.427.215,0 ՀՀ դրամով:

5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հետ, համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընկերության հետ գույքի հանձնման-ընդունման, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման, գույքն ընկերության կանոնադրական կապիտալում ներդնելու արդյունքում ընկերության կանոնադրության մեջ կատարվող համապատասխան փոփոխությունների պետական գրանցման աշխատանքների իրականացումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով ընկերության միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում լուծել ընկերության հետ կնքված՝ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում գտնվող անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը՝ պայմանագրի դադարեցման հետ կապված ծախսերն իրականացնելով ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ